ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.01.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/204

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝

Գ. Եդիգարյանի (լիազորագիր, տրված՝ 13.01.2020թ.)

Ն. Աբրահամյանի (լիազորագիր, տրված՝ 13.01.2020թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ 26/26-1/21363-2019 գրությամբ «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 19.12.2019թ. թիվ 1/18-2/79406-2019 գրության հիման վրա, 24.12.2019թ. թիվ 26/26-

1/21363-2019 գրությամբ նախաձեռնել է «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 19.11.2019թ. հայտարարած հանրային հեռախոսային ծառայությունների ձեռքբերման «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/072» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 26.11.2019թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ «Հանձնաժողով») կողմից կայացվել է որոշում մեկ աշխատանքային օրով կասեցնել Հանձնաժողովի նիստը և առաջարկել Ընկերությանը կասեցման ժամկետում շտկել անհամապատասխանությունը, այն է՝ ներկայացնել պահանջվող սակագնային ցանկը:

Հանձնաժողովի 29.11.2019թ-ի նիստի արդյունքում կազմված թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից նշված գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտը մերժվել է՝ հաշվի առնելով այն, որ վերոհիշյալ անհամապատասխանությունը վերջինիս կողմից չի շտկվել:

Վերոգրյալի կապակցությամբ Ընկերությունը նշել է, որ սակագնային ցանկը հնարավոր չի եղել ներկայացնել տեխնիկական խնդրի պատճառով: Մասնավորապես, նշված ցանկը սահմանված ժամկետում պատրաստվել և փոխանցվել է համապատասխան ստորաբաժանում՝ էլեկտրոնային փոստով ուղարկելու նպատակով: Սակայն էլեկտրոնային փոստում առկա տեխնիկական խնդրի պատճառով նամակը չի առաքվել, ինչի մասին Ընկերությունը տեղեկացել է, երբ Հանձնաժողովն արդեն իսկ կայացրել էր Ընկերության հայտը մերժելու մասին որոշում: Հետևաբար, անհամապատասխանությունը չշտկելը պայմանավորված չի եղել անփութությամբ կամ դիտավորությամբ:

Միաժամանակ, Ընկերությունը հայտնել է, որ սկսած 2016թ-ից՝ Ընկերությունը մասնակցել է բազմաթիվ գնման գործընթացներին, ճանաչվել է հաղթող դրանցից շատերում և էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ է մատուցում բազմաթիվ պետական կառույցների, այդ թվում՝ ՀՀ Վարչապետի աշխատակազմ (2016-2021թթ.), ՀՀ պաշտպանության նախարարություն (2016թ-ից մինչ օրս), ՀՀ առողջապահության նախարարություն (2017-2019թթ.), ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն (2018-2019թթ.), ՀՀ հատուկ քննչական ծառայություն (2018-2019թթ.), ՀՀ պետական եկամուտների կոմիտե (2018-2019թթ.), ՀՀ ոստիկանություն (2019թ.) և այլն: Ընկերությունը բարեխղճորեն է մասնակցել բոլոր գնման գործընթացներին, որոնց արդյունքում կնքված պայմանագրերով նախատեսված ծառայություններն Ընկերության կողմից մատուցվել և ներկայումս էլ մատուցվում են նույնպես բարեխղճորեն և պատշաճ կերպով:

«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/072» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում բացահայտված անհամապատասխանությունն Ընկերության կողմից չշտկելու պատճառով (որը տեղի է ունեցել տեխնիկական խնդրի ի հայտ գալու արդյունքում) Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելը ոչ միայն խիստ բացասաբար կանդրադառնա Ընկերության գործունեության վրա, այլև կարող է պատճառ ծառայել վերը նշված կառույցների աշխատակազմերին՝ վերջիններիս նախընտրած պայմաններով էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հետագա մատուցման անհնարինության համար, քանի որ այդ պարագայում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ընկերությունը շուրջ երկու տարի հնարավորություն չի ունենա մասնակցելու գնումների գործընթացներին: Ավելին, հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների շուկայում գործող օպերատորների խիստ սահմանափակ թիվը՝ Ընկերությանը վերը նշված ցուցակում ընդգրկելն անխուսափելիորեն հանգեցնելու է գնման գործընթացների շրջանակում արդյունավետ մրցակցության ապահովման, և հետևաբար պետական կառույցների համար նշված ծառայություններից օգտվելու համար առավել նպաստավոր պայմաններ ապահովելու անհնարինության:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/204 ընթացակարգի շրջանակներում 14.01.2020թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.12.2019թ. թիվ 1/18-2/79406-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն սույն թվականի նոյեմբերի 19-ին հայտարարել էր իր կարիքների համար հանրային հեռախոսային ծառայությունների ձեռքբերման «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/072» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցության հայտեր էին ներկայացրել «Յուքոմ» ՍՊԸ-ն և «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն: «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել էր, որ վերջինիս ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող սակագնային ցանկը:

«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/072» ծածկագրով գնման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը սույն թվականի նոյեմբերի 26-ի արձանագրությամբ Ընթացակարգը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր, իսկ «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, սակայն վերջինս, սահմանված ժամկետում չէր կատարել համապատասխան շտկումը:

«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/072» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի սույն թվականի նոյեմբերի 29-ի արձանագրության համաձայն, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 42-րդ կետը, «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացված հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/204 ընթացակարգի շրջանակներում 14.01.2020թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/204 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/204 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/072» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ 26/26-1/21363-2019 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 19.12.2019թ. թիվ 1/18-2/79406-2019 գրությունը և կից փաստաթղթերը, «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են

անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/072» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.11.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող սակագնային ցանկը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերությանը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված թերությունը շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն Ընկերության կողմից անհամապատասխանությունը չի շտկվել:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, Ընկերության հայտը մերժել է:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/072» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի, որին կցվում է ծառայությունների մատուցման սակագնային ցանկը:

Ընթացակարգի հրավերի թիվ 2 հավելվածով հաստատվել է մասնակցի կողմից ներկայացվող գնային առաջարկի օրինակելի ձևը, որում նախատեսվել է, որ գնային առաջարկին կից ներկայացվում է սակագնային ցանկը:

«ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացվել է հավելված թիվ 2 գնային առաջարկը, որին սակայն չի կցվել սակագնային ցանկը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես **գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:**

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ մասնակցի կողմից գնային առաջարկին կից ներկայացվում է սակագնային ցանկը: «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի կողմից գնային առաջարկին կից չի ներկայացվել հրավերով պահանջվող սակագնային ցանկը: Ուսումնասիրելով «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/072» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը՝ գտնում եմ, որ սակագնային ցանկը ըստ էության հանդիսանում է գնային առաջարկի բաղկացուցիչ մասը, որը պարտադիր գնային առաջարկին կից ներկայացվում

է մասնակցի կողմից, որը չներկայացնելու պայմաններում գնային առաջարկը համարվում է թերի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում չի համարվում գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերը, գտնում եմ, որ «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/072» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ 26/26-1/21363-2019 գրությամբ «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**